

**ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ
ՇՈՒՐՁ (1921 թ. ՓԵՏՐՎԱՐ-1922 թ. ՄԿԻՉԲ)**

Բանալի բառեր – ՀԽՍՀ, ՎԽՍՀ, Խորհրդային Ռուսաստան, Պ. Բնգորովկա, Ա. Սվանիձե, Չեգոբ գոտի, Ախալքալաք, Բորչալու, Ա. Մյաննիկյան, Ա. Մոսավյան, ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրո, տարածքային սահմանազատում, Վորոնցովկա, Պրիվոլնոյե

1921-1922 թթ. հայ-վրացական սահմանատարածքային անզիջում վեճում առաջացավ նոր իրավիճակ: Դա տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի վերադասավորման և ռազմաքաղաքական վճիռները խորհրդային ձևով լուծելու արդյունք էր: Մինչ խորհրդային կարգերի հաստատումը հայկական կողմին չհաջողվեց հանգուցալուծում գտնել Լոռու չեգոբ գոտու և առհասարակ հայ-վրացական վիճելի հողատարածքների սահմանազատման խնդրում, քանզի վրացական իշխանությունները համառորեն կառչել էին ինչպես 1920 թ. նոյեմբերի 13-ի հայ-վրացական երեք ամսով կնքված մեզ համար ոչ շահավետ համաձայնագրից, այնպես էլ մայիսի 7-ին ստորագրված վրաց-ռուսական պայմանագրից, որոնք նրանց ձեռնտու էին: Նրանք սկսել էին հասկանալ, որ վերջինս համապատասխանում էր Խորհրդային Ռուսաստանի ռազմավարական շահերին, այն է՝ այդ պահին հարկը չկար վերջնական հանգուցալուծում տալու տարածքային-սահմանային բնույթի վեճերին: Խորհրդային Ռուսաստանի քայլերն այդ պահին բխում էին իր ռազմավարությունից, այսինքն՝ նոր իրողությունների պայմաններում հայ-վրացական տարածքավեճը դարձել էր հարևան երկրների միջև լարվածությունը պահպանելու միջոց:

Վրաստանում խորհրդային կարգերի հաստատման և Լոռու հայ բնակչության ապստամբության և մի շարք հաղթանակների շնորհիվ հայկական Լոռին փաստացի վերամիավորվեց մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին, սակայն հայ-վրացական սահմանավեճը դարձյալ չլուծվեց և դարձավ ՌԽՖՍՀ-ի, ՀԽՍՀ-ի և ՎՍԽՀ-ի միջև լարված փոխհարաբերությունների պատճառներից մեկը: ՌԿ(Բ)Կ Կովբյուրոն դարձյալ բախվեց անդրկովկասյան երեք հանրապետությունների տարածքային վեճերի թնջուկին: 1921 թ. մայիսի 2-ին ՌԿ(Բ)Կ Կովբյուրոն որոշում ընդունեց Անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողով ստեղծելու մասին, որը պետք է գլխավորեր Ս. Մ. Կիրովը: Վերջինիս հանձնարարվեց Անդրկովկասի հանրապետությունների միջպետական սահմաններ

րի մասին առաջարկություններ ներկայացնել Կովբյուրոյի պլենումի հաստատմանը¹:

Այդ հանձնաժողովին Խորհրդային Հայաստանի դիրքորոշումը և առաջարկները ներկայացնելու համար մայիսի 9-ին հրավիրվեց խորհրդակցություն՝ ՀԽՍՀ Ռազմհեղկոմի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի ղեկավարությամբ: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցեցին Ասք. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Ս. Լուկաշինը (Սրապիոնյան), Գ. Խոջամիրյանը, որոնց տրամադրության տակ դրվեցին սահմանային-տարածքային ճշգրտումների համար անհրաժեշտ նյութեր: Լսելով «Ադրբեջանի և Վրաստանի հետ ներքին սահմանների հաստատման հարցի մասին» ՀԽՍՀ Արտգործոժողովում Ասք. Մռավյանի զեկուցումը՝ որոշվեց նրա նախագահությամբ ստեղծել համապատասխան աշխատանքային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Ս. Համբարձումյանը, Հ. Լազյանը, Ա. Ղարաբյոզյանը և մի շարք բնագավառների մասնագետներ², որոնք պետք է համապատասխան տեղեկանքներ ներկայացնեին անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև վիճարկելի համարվող տարածքների, այդ թվում Լոռու, Ախալքալաքի և Խրամի (Շավկա) վերաբերյալ: Ընդ որում Ախալքալաքի վերաբերյալ զեկուցագիրը կազմելու էր Ալ. Մյասնիկյանի բարեկամ Պողոս Աբեյանը³:

1921 թ. հունիսի 25-27-ին Թիֆլիսում տեղի ունեցավ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի՝ սահմանային հարցերին նվիրված հանձնաժողովի առաջին նիստը, որի կազմում ընդգրկված էին Ս. Կիրովը (նախագահ), Վրաստանից՝ Ա. Ս. Սվանիձեն, Թողրիան, Ադրբեջանից՝ Միրզա Դավուդ Բադիր օղլի Հուսեյնովը, Մահմեդ Հասան Ջաֆարօղլի Հաջինսկին և Էմին Ռասուլ-զադեն, Խորհրդային Հայաստանից՝ Ալ. Բեկզադյանը և որպես պատվիրակության քարտուղար՝ Վ. Մուրադյանը⁴: Առաջին իսկ նիստում Ալ. Բեկզադյանը հանձնաժողովի անդամներին առաջարկեց հաշվի առնել Խորհրդային Հայաստանի բացառիկ ծանր իրավիճակը և «հանուն ընդհանուր համերաշխության, մեկընդմիջտ, հանուն ամենաանկեղծ, բարեկամական փոխհարաբերությունների՝ հաստատել տարածքային զիջումների վերաբերյալ մինչ այդ ձեռք բերված համաձայնությունը, ընդ որում դա անել այն շրջաններում, որոնք համահավաք բնակեցված են հայկական բնակչությամբ»: Խորհրդային Հայաստանի Արտգործնախարար Ալեքսանդր Բեկզադյանը, դատապարտելով ցարական կառավարության օրոք կայացված վարչաքաղաքական բա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 85, ց. 1, գ. 58, թ. 2-3:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 15-17:

³ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 333-335:

⁴ Վահագն Գալուստի Մուրադյան – Հայաստանի առաջին հանրապետության Չինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքի նախկին պետ (1920 թ. ապրիլ-հունիսի վերջ):

Ժանումները և ընդգծելով Հայոց Մեծ եղեռնից տուժած հայության խնդիրներն ու Խորհրդային Հայաստանի համար ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, սահմանազատիչ հանձնաժողովին խնդրեց գերազանցապես հայկական բնակչությանը Ախալքալաքի գավառը զիջել Հայաստանին: Հայտնի է, որ այդ գավառը դեռևս 1921 թ. փետրվարի վերջին-մարտի սկզբին թուրք-վրացական գաղտնի համաձայնության և թուրք-բոլշևիկյան բանակցությունների արդյունքում ապօրինաբար զիջվել էր քեմալական Թուրքիային, որտեղից նրանք դուրս եկան միայն 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Հեկկերի պարտադրանքից հետո: Սակայն հանձնաժողովի աղբյուրներից և վրացի անդամների պնդմամբ և Ս. Մ. Կիրովի գորակցությամբ հարցի վերջնական հանգուցալուծումը տեղափոխվեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրո:

Հունիսի 26-ին Կովբյուրոյի հերթական նիստին, որին մասնակցել են Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ի. Դ. Օրախելաշվիլին և Շ. Ջ. Էլիավան, Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների տարածքային սահմանազատման մասին հարցը հերթական անգամ փակուղի մտավ, և ստեղծված վիճակում Ալ. Բեկզադյանին ոչինչ չէր մնալու, քան պնդել, որ հարցը դարձյալ դրվի ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի նիստի քննարկմանը¹:

Պողոս Աբելյանը, կատարելով Ասք. Մռավյանի հանձնարարականը, 1921 թ. հուլիսին ներկայացրեց խնամքով պատրաստված փաստաթուղթ Ախալքալաքի գավառի մասին, որտեղ ժողովրդագրական և վիճակագրական հարուստ փաստեր կային, որոնք հիմնավորում էին Ախալքալաքը Խորհրդային Հայաստանին միավորելու տնտեսական-քաղաքական անհրաժեշտությունը՝ միաժամանակ անընդունելի համարելով Վրաստանի Հանրապետության շրջանակներում Ախալքալաքին ինքնավարություն շնորհելու ցանկացած տարբերակ²: Հարկ է նշել, որ ՀԿ(բ)Կ ԿԿ-ն, կարևորելով պատմա-քաղաքական տարբեր գործոններ, խնամքով նախապատրաստվել էր այդ հարցին՝ առավել նպատակահարմար համարելով Բորչալուի մի մասի և Ախալքալաքի ընդգրկումը ՀԽՍՀ կազմում՝ ելնելով հետևյալ կանխադրույթներից.

- 1) ըստ 1917 թ. Կովկասյան օրացույցի վիճակագրական տվյալների՝ Ախալքալաքում ապրում էր 82725 հայ, 10306 վրացի (որից վրացի մուսուլմաններ՝ 2877 հոգի), 901 քուրդ, 6335 մուսուլման, 7542 ռուս, 234 հրեա, այլ ազգություններ՝ 13:
- 2) Բորչալուի գավառի նախալեռնային մասը բնապատմական և տնտեսական առումով Լոռու օրգանական շարունակությունն է՝ տնտեսությամբ առավելապես կապված Լոռու հետ: Ուստի նպատակահար-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1420, թ. 15-17 (Անդրկովկասի հանրապետությունների միջև ներքին սահմանների որոշման հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճեն):

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 122-134, ֆ. 113, ց. 3, գ. 42, թ. 41-53:

մար է դրանց ընդգրկումը մեկ վարչական միավորում:

- 3) Ախալքալաքի գավառը ճանապարհային հաղորդակցության տեսանկյունից առավել մեծ հարմարություններ ունի Հայաստանի կողմից, հանձին Ախալքալաք-Բոգդանովկա-Երմոլովկա-Ղըզլ-Կոչ-Ալեքսանդրապոլ ճանապարհի, որը ամբողջ ձևավորված ընթացքում բաց է մնում, այնինչ դեպի Վրաստան տանող ճանապարհը հաճախ փակվում է ձնաարգելապատնեշների հետևանքով:
- 4) Ազատ հողերին կարող են տեղաբաշխել Թուրքիայից, Կարսի մարզից և այլ տարածաշրջաններից եկած հայ փախստականներին: Փաստաթղթում նաև նշվում էր, որ Ախալքալաքի հյուսիսային ծայրամասը, որը հիմնականում բնակեցված էր վրացիներով, աննպատակահարմար էր համարվում ընդգրկել ՀԽՍՀ կազմում¹:

Հարցը հանգուցալուծվեց 1921 թ. հուլիսի 7-ի Կովբյուրոյի պլենումի նիստում, որին մասնակցում էին Ի. Ստալինը, ինչպես նաև Վրաստանի և Հայաստանի Արտաքին գործերի ժողովուրդներ Ա. Սվանիձեն, Ասք. Մոսվյանը: Վեց կողմ և մեկ ձեռնպահ քվեով որոշում կայացվեց Լոռու նախկին Չեզոք գոտին միացնել Խորհրդային Հայաստանին²: Ախալքալաքի և Խրամի շրջանների հարցը որոշվեց քննարկել Վրաստանի ԿԿ Կենտրոնական կոմիտեում, որի եզրակացությունները այնուհետև պետք է լսվեին Կովբյուրոյի պլենումում³: Այս հարցի կապակցությամբ վրացական մամուլում տեղ գտած որոշ նյութեր իրադարձությունները փոքր-ինչ այլ կերպ են ներկայացրել: Դրանք միանշանակ փաստում են այս խնդրի հանգուցալուծման գործում խորհրդային Մոսկվայի վարչաօրհանայական պահվածքը: Իրադարձությունների ժամանակակից Ալեքսանդր Մուշիքին ուղղակի պնդում է. «Վրաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո ամբողջ Լոռին հանձնվեց Հայաստանին: Հայաստանը վերցրեց ոչ միայն Լոռվա հարավային մասը՝ Սանահինով և Հաղպատով, այլ նաև հյուսիսային մասը՝ Ախթալայով և պղնձի հանքերով:

Այս ամենը կատարվեց Ա. Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ, նրա գործունեության վարչաօրհանայական մեթոդով: Հիշյալ հարցը նա ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյին ընդունել տվեց միանձնյա, այսինքն՝ փաստորեն անօրինական որոշումով: Ահա՛ այսպես, ձեռքի մի շարժումով վճռվել է այդ բարդ հարցը⁴: Ընդ որում հետաքրքիր է նշել, որ նա անգամ պնդում է, որ ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի պլենումը Չեզոք գոտին Հայաստանին միացնելու մասին որոշումը 1921 թ. հուլիսի 7-ին ընդունել է «1 կողմ, 1 դեմ» համամասնությամբ, մյուս անդամները քվեարկությանը չեն մասնակցել, և

¹ Տե՛ս ՀՍՍՀ, ֆ. 113, ց. 3, գ. 42, թ. 54, գ. 13, թ. 92-93:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 47, թ. 8, ֆ. 4033, ց. 2, գ. 1185, թ. 35:

³ Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920//_Тойдзе Л., После 25 февраля, Тбилиси, 1990, с. 23-24:

⁴ Տե՛ս «Ձեռագիր», 1989, № 7, ճջ. 106-107 (վրացերենից թարգմ. Հր. Բայրամյանը):

հենց այստեղ վճռորոշ դեր է խաղացել Ս. Օրջոնիկիձեն: Ըստ Ա. Մուջիրիի՝ ոչ մի քվորում չի ապահովվել, որ «նույն այդ Կովկասյան բյուրոյի հայ անդամները, առհասարակ քվեարկությանը չեն մասնակցել»¹: Փոքր-ինչ այլ գունդերանգներով է Լոռվա Չեզոք գոտու հարցի հանգուցալուծումը ներկայացնում իրադարձությունների մեկ այլ ժամանակակից՝ Գերոնտի Քիքոձեն. «Վրաստանի խորհրդայնացումից հետո ամբողջ Լոռին հանձնվեց Հայաստանին: Նա յուրացրեց ոչ միայն հարավային մասը, այլ նաև հյուսիսային մասը՝ Ախալալայով և Ալավերդու պղնձահանքերով:

Պարզ է, որ այս պատերազմին հայերը շատ լավ էին պատրաստվել, ուստի և հասան իրենց նպատակին, բայց պետք է ասել, որ սա ամենացավալի միջադեպերից մեկն է Վրաստանի և Հայաստանի պատմության մեջ»²:

Հուլիսի 16-ին Վրաստանի Կոմկուսի ԿԿ նախագահությունը, միանգամայն անընդունելի համարելով Խորհրդային Հայաստանի պատվիրակության առաջարկը, այդուհանդերձ հաստատեց Կովբյուրոյի որոշումը Լոռու չեզոք գոտին Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին: Ֆ. Մախարաձեն, Ս. Օրախելաշվիլին, Բ. Մոդիվանին նշել են, որ հարցը որոշված է, բայց ավելի լավ կլինեք հանրահավաք անցկացնել: Իսկ Ախալքալաքի շրջանը ՀԽՍՀ-ին զիջելու հարցում Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի նախագահությունը միանգամայն այլ դիրքորոշում ընդունեց: Ելնելով Թիֆլիսի հետ Ախալքալաքի և Խրամի (Օակլայի) շրջանների ունեցած իբր թե կայուն և անխզելի տնտեսական կապերից՝ որոշվեց մերժել Ախալքալաքի շրջանը Խորհրդային Հայաստանին միացնելու առաջարկը³: Սակայն դրանով վրացական կողմը չբավարարվեց, և սահմանագատման խնդրում հարուցեց նորանոր խոչընդոտներ՝ զանց առնելով հայ-վրացական համաձայնագրերը և Կովկասյան բյուրոյի ընդունած քաղաքական որոշումները: 1921 թ. աշնանից սկսած՝ վրացական իշխանությունները չէին խորշում անհարկի միջամտել Վորոնցովկայի և այլ շրջանների տնտեսական կյանքին, անօրինական հարկեր հավաքել: Ինչպես պարզ է դառնում Ժողտնտխորհի նախագահի պաշտոնակատար Ավատկովի գրությունից՝ ուղղված Վորոնցովկայի գավառային հեղկոմին, ՀԽՍՀ կառավարության կողմից Վրաստանի Արտգործժողկոմին 1921 թ. սեպտեմբերի 7-ին գրություն է ուղարկվում, որով ևս մեկ անգամ հիշեցվում էր, որ Վորոնցովկան Վրաստանի ԽՍՀ կազմում չէ, այդ իսկ պատճառով Վրաստանի Ժողտնտխորհը իրավունք չունի նշված շրջանի գործարանների մասին կարգադրություններ անել⁴: Սակայն, ինչպես պարզվում է Վորոնցովկայի սովբաժանմունքի պետի գրությունից, Վորոնցովկայի բնակիչները

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում, թիվ 1, էջ 14-15:

³ Տե՛ս **Хармандарян С. В.**, Ленин и становление Закавказской Федерации. 1921-1923, Ереван, 1969, с. 110:

⁴ Տե՛ս ՀՍՍՀ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 74:

արդեն վճռել էին Վրաստանին հարկեր չվճարել, մինչև պարզվեր, թե Վորոնցովկան ում է պատկանում¹:

Ի վերջո, 1921 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում ստորագրված հայ-վրացական սահմանագծի մասին վերջնական համարվող համաձայնագրով Լոռու Չեզոք գոտին, բացառությամբ մի քանի հայաբնակ սահմանամերձ գյուղերի, վերամիավորվեց Խորհրդային Հայաստանին²: Մեր կողմից այն ստորագրեց Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, Վրաստանի կողմից այն վավերացրեց հեղկոմի նախագահ Բ. Մդիվանին: Վրացական կողմի պնդմամբ շուտով սահմանագծումը միանգամայն այլ բովանդակություն ձեռք բերեց, և մի շարք հայկական գյուղեր՝ Ջանդարը, Օփրեթը, Խոժոռնին, Բրդաձորը, Սադախուն և այլն, մնացին Վրացական ԽՍՀ սահմաններում³: Այդ սահմանագծման հիմքում ընկած էր նախկին ցարական կառավարության վարչատարածքային բաժանումը, աղավաղման էին ենթարկվել անգամ Լոռու սահմանագծի որոշ հատվածներ: Այնուամենայնիվ, որոշակի վերապահումներով հանդերձ, կարելի է եզրահանգել, որ Լոռու Չեզոք գոտին, որը ըստ Գ. Բադալյանի կատարած հաշվարկների զբաղեցնում էր շուրջ 1900 քառակուսի կմ⁴, իսկ այլ հաշվարկների համաձայն՝ ավելի, քան 1700 քառակուսի կմ, բացառությամբ հյուսիսային մասում գտնվող մի շարք սահմանամերձ գյուղերի (Իրգանչայ, Սաաթլու, Ջանդար, Աղքյորփի, Օփրեթ, Բրդաձոր, Սադախլո և այլն, որոնք կազմում էին շուրջ 200 քառակուսի կմ տարածք), դարձավ Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը⁵: Այսպիսով, Վրաստանի Խորհրդային Հանրապետության Հեղկոմի և Հայաստանի Խորհրդային Հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհրդի միջև սահմանների մասին կայացված որոշման համաձայն՝ գծվեց հետևյալ սահմանագիծը. սկսվում էր Ուչ Թափալար սարից՝ ոլորապտույտ իջնելով արևմուտքից արևելք մինչև Օրթուլ-դաղի լեռնանցքը և Օքյուզ-դարից ուղղվում դեպի հյուսիս-արևելք: Այնուհետև թեքվելով դեպի արևելք՝ սահմանագիծը հյուսիսում էր թողնում Սադաթինսկի (Սադաթափա) լիճը և Տրոխցկոյե գյուղը, իսկ հարավում՝ Տաթոյ-Խաբաբա (Շիրակի մարզի Բավրա գյուղ), Կարմիր Խաբաբա և Դար-Քեոյ (Սարագյուղ) բնակավայրերը: Այս սահմանագիծը հասնում էր Լեզլի-Դաղ (Աչքասար) սարը, այնուհետև լեռան գագաթով ձգվում ուղիղ դեպի Իրգանչայ գյուղը և դեպի Կուլու-դաղ, որից հետո՝ Սաաթի և Ջանդար գյուղերը, հասնում մինչև Աղքյորփի և ուղղվում դեպի Օփրեթ գյուղը, որից հետո՝ մինչև Խոժոռնի գյուղի քանդված մատուռը, Բրդաձոր գյուղը, Սադախ-

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 71-72:

² Տե՛ս նույն տեղում, գ. 116, թ. 29, գ. 55, թ. 3, 10:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ.**, Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, 2015, էջ 29:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 3, թ. 66-67, ց. 3, գ. 116, թ. 29:

լո կայարանը: Վերջնամասում հատելով Թափա-դաղ լեռը Խաչա-Ղալա սարից Պալոյթի-Բաշի ընկած սահմանագծի հյուսիսային մասում հասնում էր Աղբյուր անունով տեղանքին: Սույն փաստաթղթի ծանոթագրությունում արձանագրվում էր վերը բերված փաստի մասին, այն է՝ Իրգանչայ, Ջանդար, Աղբյուրփի, Օփրեթ, Խոժոռնի, Բրդաձոր, Սադախլո բնակավայրերը մնում են Վրաստանի կազմում¹:

Ժողկոմխորհի նախագահության 1921 թ. դեկտեմբերի 24-ի նիստում տրված հակիրճ հաշվետվության մեջ Արտգործժողկոմ Ասք. Մոավյանը հաստատում էր այն փաստը, որ Վրաստանի ԽՍՀ կառավարության հետ վերջնական համաձայնություն է ձեռք բերվել սահմանների հաստատման հարցի շուրջ, ըստ որի՝ ամբողջ նախկին Չեզոք գոտին և Բորչալուն անցնում են Հայաստանին²:

Այսպիսով, խորհրդային իշխանությունները սահմանագատման խնդրում գտան իրենց կողմից պարտադրված աշխարհաքաղաքական նոր իրողություններից բխող լուծում և կարծես թե դուրս եկան փակուղային կիճակից, որը կողմերին չբավարարեց, ուստի զսպված լարվածությունը պահպանվեց: 1921 թ. նոյեմբերի 6-ին՝ Թիֆլիսում հայ-վրացական սահմանագծի մասին վերջնական համաձայնագրի ստորագրումից հետո, Խորհրդային Հայաստանի և Վրաստանի միջև նոր տարաձայնություններ առաջացան: ՀԽՍՀ-ՎԽՍՀ միջպետական սահմանագծի մանրամասների ճշգրտման շուրջ ծագեց մեծ լարվածություն, քանզի վրացական իշխանությունները չբավարարվեցին հաստատագրված վիճակով և օգտվելով ՌԿ(Բ)Կ վերին օղակների ակնհայտ աջակցությունից հարցը նորից բարձրացրին: Վրացական կողմը, խախտելով նախկինում ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները, ջանք չէր ինսայում Լոռու տարածքից նոր կտորներ անդամահատելու և դրանք Վրացական ԽՍՀ-ին կցելու համար: Խոսքը, բնականաբար, առաջին հերթին վերաբերում էր Լոռու Չեզոք գոտուն:

1921 թ. դեկտեմբերի 24-ին ՀԽՍՀ Արտգործժողկոմատը հեռագրում է Վրաստանի Արտաքին գործերի ժողկոմին (պատճենը՝ Վրաստանում Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Սուրխաթյանին, ինչպես նաև Օնիկ Օհանջանյանին), որ Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները Հայաստանի կազմում ընդգրկելու գործընթացը կազմակերպելու համար ներկայացուցիչ է նշանակվել Լոռու գավառի հեղկոմի նախագահ Օնիկ Օհանջանյանը, իսկ ընդունման արարողությունը տեղի կունենա Վորոնցովկայում դեկտեմբերի 27-ին³, համաձայն Թիֆլիսում Մոավյանի և Սվանիձեի միջև ձեռք բերված

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 55, թ. 10, 66:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 110, թ. 3:

³ Տեղին է ասել, որ դրանից գրեթե մեկ տարի առաջ Վորոնցովկայի շրջանի գյուղական ընկերության համագումարը իր 1920 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված օրինական վճռում 233 գյուղացիների անմիջական մասնակցությամբ դատապարտել էր վրացական զորքերի մուտքը

պայմանավորվածության¹: Միաժամանակ Մոսկվանը համապատասխան հեռագիր է ուղարկում Ղարաքիլիսա՝ Լոռու գավառային զինկոմ Ստեփանյանին՝ հրահանգելով Օհանջանյանի հետ մասնակցել Վրաստանի կողմից Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները Հայաստանին հանձնելու արարողությանը և ընդունել դրանք²: Կարծես թե այդ պահին ամեն ինչ ընթանում էր ըստ ձեռք բերված համաձայնության: Դեկտեմբերի 26-ին Սվանիձեից ստացվում է հեռագիր, որ Վրաստանի ներկայացուցիչներ նշանակված Պավել Ինգորովան և Գրիգորի Կիկոձեն դեկտեմբերի 27-ին կլինեն Վորոնցովկայում: Այդ օրը նրանք ժամանում են Քոլագիրան կայարանը, որտեղ հանդիսավոր ընդունելության են արժանանում տեղական հայկական իշխանությունների կողմից զինկոմիսար Ստեփանյանի գլխավորությամբ: Սակայն վրաց ներկայացուցիչների խոսքերը սառը ցնցուղ են դառնում հայկական կողմի համար. նրանք հայտարարում են, որ եկել են ոչ թե այդ շրջանները Հայաստանին հանձնելու, այլ ՀԽՍՀ-ի և ՎԽՍՀ-ի միջև սահմանները ճշգրտելու: Ընդ որում անվարան ներկայացնում են Սվանիձեի և Մաչաբեի ստորագրությամբ դեկտեմբերի 16-ին իրենց տրված մանդատները՝ որպես սահմանագիծը որոշող խառը հանձնաժողովի ՎՄԽՀ պատգամավորներ, և խնդրում կազմակերպել փոքրիկ խորհրդակցություն հանգամանքները պարզելու համար: Այդ մասին փաստում է Լոռու զինկոմիսար Ստեփանյանը ՀԽՍՀ Արտգործժողկոմի քարտուղար Մ. Խոջամիրյանի հետ ունեցած հեռագրակապում՝ հայտնելով որ իրենք ժամանակին ներկայացել են վրաց պատվիրակներին դիմավորելու՝ կատարելով Արտգործժողկոմ Ասք. Մոսկվանի հանձնարարականը³: Չերկնչելով իրենց լիազորությունները չարաշահելու փաստից՝ վրացական կողմի ներկայացուցիչները հայտարարեցին, որ իբր իրենք հարկադրված են ետ մեկնել Թիֆլիս՝ նոր հրահանգներ ստանալու համար: Դրան ի պատասխան՝ Ստեփանյանը նկատում է, որ սահմանը հստակ նշված է Ալ. Մյասնիկյանի և Բ. Մդիվանու ստորագրած նոյեմբերի 6-ի համաձայնագրում, իսկ ինչ վերաբերում է տեղագրական մանրամասներին, ապա այդպիսիք կարելի է որոշել այն պահին, երբ նպատակահարմար լինի⁴:

Վորոնցովկա, նրանց կողմից թույլ տրված բռնությունները և գյուղացիների ունեցվածքի անհարկի բռնագրավումները: Ընդունված որոշման մեջ դատապարտելով Վրաստանի կառավարության քաղաքականությունը, այն դիտարկելով որպես ոտնձգություն Բորչալուի գավառի Չեգոք գոտու բնակչության կամքի ազատ արտահայտման և իրավունքների վրա, որը չէր եղել անգամ Նիկոլայ ցարի ժամանակ, գյուղական ընկերության համագումարը միանշանակ մերժել էր վրացական իշխանությունների անօրինական միջամտությունը Վորոնցովկայի և առհասարակ Բորչալուի գավառի Չեգոք գոտու գործերին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 82, թ. 38):

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 55, թ. 8, 11-13, 30, 31:

² Տե՛ս նույն տեղում, թ. 8, 30-32:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 16:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ.:

Հրահանգավորված լինելով՝ Ինգորոկվան և Կիկոձեն անդրդվելի են մնում և պնդում, որ իրենք լիազորված չեն և վախենում են իրենց լիազորությունները չարաշահելուց: Նրանք փարիսեցիաբար ներողություն են խնդրում, որ պետք է մեկնեն Թիֆլիս՝ համապատասխան մանդատներ ստանալու՝ հայցելով հայկական կողմի ներողամտությունը Վրաստանի Արտգործոժողկոմատի թույլ տված «թյուրիմացության» համար¹: Այդ ամենին ի պատասխան՝ ՀԽՍՀ ղեկավարությունը համառ ջանքեր է գործադրում ստեղծված իրավիճակի վրա վերահսկողությունը պահպանելու և վրաց բոլշևիկներին դիմակայելու ու տարածքային նոր կորուստներ թույլ չտալու համար: Հենց այդ նպատակով ՀԽՍՀ Արտգործոժողկոմատը ղեկտեմբերի 31-ին նորից դիմում է վրացական կողմին՝ 1922 թ. հունվարի 5-ին իր ներկայացուցիչներին ուղարկել վերոնշյալ շրջանները հանձնելու համար՝ մատնանշելով այն տեղափոխության մասին, որը թողել էին Կիկոձեն և Ինգորոկվան իբր թե մանդատների հետ կապված իրենց չհիմնավորված ետդարձով: Վրաստանի ներկայացուցիչներ են նշանակվում Ներքին գործերի ժողկոմի տեղակալ Նիկոլայ Սո. Սոկոլովսկին և Միլիցիայի գլխավոր վարչության պետ Արչիլ Լ. Պուրցելաձեն: Սվանիձեն վրացական կողմին հատուկ երկերեսանիությամբ խորամանկ մանևրի է դիմում և նախապես «խնդրում», որ խառը սահմանային հանձնաժողովի առաջարկվող նիստը հրավիրեն Թիֆլիսում հունվարի 9-ին, քանի որ նոյեմբերի 6-ի համաձայնությամբ սահմանագիծը նշված է ընդհանուր ձևով՝ ոչ մանրակրկիտ: Վրացական կողմի կարծիքով այդ սահմանագիծը մասնատում էր սահմանային գյուղերի հողահանդակները: Սվանիձեն հայտնում էր, որ ՎՍՍՀ-ի կողմից խառը հանձնաժողովի անդամներ են նշանակվում Ինգորոկվան և Կիկոձեն: Բացի այդ, Վրաստանի կառավարությունը առանց հայկական կողմի կարծիքը հաշվի առնելու՝ հանձնաժողովի աշխատավայր էր նշանակել Թիֆլիսը, պատճառաբանելով, որ սահմանային գյուղերի հողային հարցերի վերաբերյալ նյութերը գտնվում են այնտեղ: Դա խնդրի հանգուցալուծման տեսանկյունից ամենևին էլ երկրորդական հանգամանք չէր: Վրացական կողմը անցավ քաղաքական-հոգեբանական գրոհի՝ վստահ լինելով, որ սեփական տան պատերը կօգնեն սահմանավեճը իրենց օգտին լուծելու համար: Դրա հետ մեկտեղ կրկին սանձազերծված սահմանատարածքային վեճում Վրաստանի համար ավելի նպաստավոր վիճակ ստեղծելու նպատակով Սվանիձեն անհրաժեշտ համարեց ՌԽՖՍՀ ներկայացուցչի մասնակցությունը որպես հանձնաժողովի նախագահի:

1922 թ. հունվարի 1-ին Լոռու գավառային հեղկոմի նախագահի հետ ուղիղ հեռագրակապով խոսակցությունից ակնհայտ է դառնում դիվանագիտական-բանակցային լարված պայքարը Վորոնցովկայի շրջանը Խորհրդային Հայաստանին հանձնելու հարցի շուրջ: 1921 թ. դեկտեմբերի 27-ին ՀԽՍՀ

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ., 16-17, 33:

Արտաքին գործերի ժողկոմ Ասք. Մռավյանը Լոռու գավառային հեղկոմի նախագահ Օհանջանյանին և զինկոմ Ստեփանյանին ուղղված հեռագրում տեղեկացրել էր այն մասին, որ նրանք որպես կառավարության ներկայացուցիչներ, Արտգործժողկոմից լիազորված են մասնակցելու Վրաստանի կողմից Վորոնցովկայի շրջանը պաշտոնապես Հայաստանին հանձնելու արարողությանը¹:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ, ի պատասխան վրաց կառավարության փոփոխամիտ և խարդավալից քայլերի, ՀԽՍՀ կառավարությունը և մասնավորապես Ասք. Մռավյանը անհողորդ են և պատասխան գործողություններում աներկբա պնդում են հայկական կողմի նախկին տեսակետը և Սվանիձեին առաջարկում Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները հանձնել ՀԽՍՀ-ին: Ա. Մռավյանը հանձնման օր էր նշանակել 1922 թ. հունվարի 7-ը, իսկ վրացական նոր մոտեցումը համարում էր ուշացած և հարցի լուծումը ձգձգելու միտում: Ա. Մռավյանը հայկական կողմի նման կոշտ մոտեցումը պատճառաբանել էր այդ շրջաններում տեղական խորհուրդների և Հայաստանի խորհուրդների համագումարի ընտրությունների անցկացման անհրաժեշտությամբ²: Այդ խնդրի հետ էր կապված նաև Սուրխաթյանի հեռագիրը, որում վերջինս պարզաբանումներ էր տալիս՝ ՀԽՍՀ Արտգործժողկոմին տեղեկացնելով, որ Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանների հանձնումը կարող է տեղի ունենալ հունվարի 7-ին, եթե Հայաստանի կառավարությունը համաձայնվի Վրաստանին զիջել Սադախլոյի շրջանի Լամբալո և Քերպիլի գյուղերը, ինչպես նաև Սադախլոյից դեպի արևմուտք գտնվող ևս ինչ-որ հողակտոր³:

Արձագանքելով Մռավյանի վերջին հեռագրին՝ Սվանիձեն ուղարկում է հետևյալ պատասխան հեռագիրը. «Հաստատում եմ իմ դեկտեմբերի 31-ի հեռագիրը: Վորոնցովկայի, Պրիվոլնոյի, Սադախլոյի հարցը պետք է որոշի մեկ հանձնաժողով: Հետաձգել խառը հանձնաժողովի աշխատանքը՝ աննպատակահարմար է: Նրա աշխատանքի ավարտմամբ հանձնման ժամանակ չի կարող տեղ գտնել որևիցե թյուրիմացություն»⁴: Դրան ի պատասխան՝ Մռավյանը հունվարի 6-ին հայտնում է հետևյալը. «Բաց թողնելով Սադախլոյի հարցը և համաձայնվելով սահամանագիծը ճշգրիտ հաստատելու համար խառը հանձնաժողովի ստեղծմանը, քանի որ այն ձեզ չի բավարարում, մենք այնուամենայնիվ պնդում ենք մեր պատգամավորների Վորոնցովկա մտնելու վրա՝ Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները հանձնելու համար՝ ոչ ավելի ուշ քան 7-ին կամ 8-ին, նկատի ունենալով մեզ համար տվյալ հարցի բացառիկ նշանակությունը, քանի որ ծայրահեղորեն կարևոր է ան-

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 13:

² Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ., 18, 51:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ., 18, 51:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ., 21-22, 55-56:

հապաղ ձեռնամուխ լինել խորհուրդների ընտրություններին: Հետաձգումը գրկում է բնակչությանը հնարավորությունից ներկայացված լինել հունվարի 20-ին բացվող Խորհուրդների համագումարին: Ձեր կողմից վիճարկվող շրջանը մեր կողմից ուսումնասիրվում է և մոտակա օրերին խառը հանձնաժողովի մեր ներկայացուցիչը կմեկնի Թիֆլիս»¹: Մակայն վրաց բոլշևիկները այս անգամ չշտապեցին պատասխանել այդ հեռագրին՝ ձգտելով ավելի խճճել իրավիճակը հայ-վրացական սահմանավեճի շուրջ և խուճապ սերմանել հայկական կողմի մոտ: Պատասխանը ստացվեց ավելի ուշ, իսկ այդ ընթացքում ՀԽՍՀ ղեկավարությունը կրկին հարցապնդումով դիմեց Վրաստանի կառավարությանը: Միայն 1922 թ. հունվարի 11-ին Վրաստանից հաղորդագրություն ստացվեց, որում Սվանիձեն տեղեկացնում էր, որ հարցի լուծումը հանձնվել է Կոլբյուրոյի քննարկմանը՝ խնդրին հանգուցալուծում տալու համար²:

Այդ բանակցությունների ժամանակ Հայաստանի Արտաքին գործերի ժողովումատում բազում հաղորդագրություններ էին ստացվում Լոռու գավառային իշխանություններից վրացական իշխանությունների կողմից գործադրվող բռնությունների մասին, որոնք հավաստում էին 1921 թ. նոյեմբերի 6-ի պայմանագրից բխող սկզբունքների խախտման և մասնավորապես հավաքվող պարենհարկի խնդրում տեղ գտած սանձարձակությունների մասին: Դրա հետ մեկտեղ, Լոռու գավառային գործադիր կոմիտեի անդամ Լիսինը հաղորդել էր վրացական իշխանությունների կողմից գավառի ղեկավարության ներկայացուցիչների ձեռքակալման մասին՝ այն պատրվակով, որ վերջիններս խոչընդոտում են պարենհարկի հավաքումը: Լիսինը նաև հայտնում էր, որ Բորչալուի գավառային հեղկոմը Վրաստանի Արտգործժողովումատից ծանուցում է ստացել, որ Վորոնցովկան վերջնականապես անցնում է Վրաստանին, ուստի հայկական իշխանությունների ներկայացուցիչներին առաջարկվել է թողնել բոլոր աշխատանքները և լքել շրջանը: Հեռագրում նաև հայտնվում էր Բորչալուի գավառի բնակիչների ակնկալիքների մասին, որ հայկական իշխանությունները վճռական միջոցներ կձեռնարկեն և վերջ կտան Վորոնցովկայի շուրջ ստեղծված իրավիճակին³: Այն ժամանակ, երբ Հայաստանի Արտգործժողովումատը սպասում էր վրացական կողմի ողջամիտ մոտեցմանը և հարցի լուծման մասին սպասվող վճռին, Ջալալօղլիից Լոռու գավառային հեղկոմի նախագահ Օ. Օհանջանյանից ստացվում է հետևյալ հաղորդումը. «Երևան, Հայաստանի Արտգործժողովումատին: Համաձայն Ձեր հունվարի 12-ի հեռագրի հաղորդում եմ, որ ժամանել ենք Վորոնցովկա՝ շրջանը ընդունելու համար, Վրաստանի ներկայացուցիչները չեն ներկայացել հունվարի 13-ի նիստին: Վորոնցովկայի շրջանի բոլոր ներկայա-

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 8-9, 23, 57:

² Տե՛ս նույն տեղում, թ. 9, 12, 14, 27, 50:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 9, 24:

ցուցիչների և 18-րդ հեծելազնի հրամանատարի մասնակցությամբ որոշեցինք. «Համարել հանձնման հետագա ձգձգումը միանգամայն շրջանը կազմալուծող: Այդ պատճառով շրջանը անհապաղ պետք է կազմակերպական և վարչական տեսանկյունից կապվի ՀԽՍՀ Լոռու գավառային կազմակերպությունների հետ: Հետագայում ղեկավարվել նրանց կարգադրություններով և հրահանգներով, տեղագրական մանրամասնումը իրականացնել ԽՍՀՄ, Վրաստանի պաշտոնական ներկայացուցիչների ժամանման դեպքում: Փաստացիորեն շրջանը հունվարի 14-ին ընդունվել է՝ որպես շրջանային հեղկումի լիազոր-ներկայացուցիչ թողնելով Ա. Լիսինին, Քաղբյուրոյի անդամ՝ Դավիդյուկին, Միլիցիայի պետ՝ Ասյուտինին: Խնդրում եմ անհապաղ հաղորդել, թե ինչպես է նախատեսվում շրջանում իշխանության հետագա կազմակերպման հարցը, ձեռնամուխ լինել խորհուրդների ընտրություններին թե՛ թողնել այդ նույն հեղկումները: Գրավոր զեկուցագիրը կներկայացվի մի շաբթ հարցեր պարզելուց հետո: Լոռու Հեղկումի նախագահ՝ Օնիկ Օհանջանյան, հունվարի 15»¹: Ակնհայտ է, որ այս պայմաններում ՀԽՍՀ իշխանությունները միանգամայն նպատակաուղղված են գործել, և ձգտել են կանխել հարցի լուծման հետագա ձգձգումը և օր առաջ իրականացնել Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանների ընդգրկումը ՀԽՍՀ կազմում: ՀԽՍՀ Արտգործժողկոմատը Լոռու իշխանություններին կարգադրություն է անում նշված շրջանում Խորհուրդների համագումար հրավիրելու կապակցությամբ շտապ կազմակերպել տեղական խորհուրդների ընտրություններ:

Հարկ է ասել, որ դեռևս երկար ժամանակ կողմերը ակտիվ վիճարկում ու քննարկում են այս կամ այն բնակավայրի թե՛ մեկ և թե՛ մյուս հանրապետությանը անցնելու նպատակահարմարության և տնտեսական շահավետության հարցը: Մի շաբթ դիտարժան մանրամասների մասին տեղեկանում ենք Լոռու գավառային հեղկումի նախագահի հետ 1922 թ. հունվարի 18-ին կայացած ուղիղ հեռագրագծով խոսակցությունից: Այսպես, պարզվում է, որ վրացական կողմը, առաջ քաշելով Բորչալուի գավառի սահմանագծի փոփոխությունը, նպատակահարմար էր գտել, որ Սադախլոյի հատվածից Վրաստանին անցնի Լամբալո գյուղը: Ըստ Կովկասյան օրացույցի («Кавказский календарь»)՝ 1917 թ. այն ուներ 493 թաթար բնակիչ, իսկ Քերպիլին՝ 427 բնակիչ: Ուստի համաձայն հայկական կողմի եզրահանգման՝ Վրաստանին անցնելու անհրաժեշտությունը նրանք հիմնավորել էին նրանով, որ իբր թե՛ աշխարհագրական և թե՛ ազգագրական առումներով այդ բնակավայրերը ընդգրկվում են ոչ թե Լոռու, այլ Բորչալուի հովտի կազմում, և հոգուտ Վրաստանի լուծման պարագայում վերջինս ձեռք էր բերում Լամբալոյի հացառատ շրջանը, Սադախլո և Այրում կայարանների տեղամասերի երկաթուղագծի

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 9, 29:

մի մասը և շուրջ 75 քառ. կմ տարածք: Միաժամանակ, հայկական կողմը հաշվարկել էր նաև Սադախլոյի այդ հատվածի տնտեսական նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար և հանգել հետևության, որ Արչիխ, Աչքաձոր և մերձակա այլ գյուղերը Լամբալոյի շրջանից ստանում էին իրենց անհրաժեշտ հացը¹: Դրա հետ մեկտեղ, ըստ վերոհիշյալ վերլուծության, վարչական ծայրակետը կամ սահմանակետը Վրաստանի հետ պետք է լիներ Պալուրի Բաշին, որը Ադրբեջանի հետ Խորհրդային Հայաստանի ազգագրական սկզբնակետն էր²: Ուստի Սադախլոյի շրջանը Վրաստանին անցնելու դեպքում Հայաստանը կորցնում էր Լամբալոյի հացառատ շրջանը, շուրջ 15 վերստ երկարության երկաթգիծ և 75 քառ. կմ տարածք՝ մոտավորապես Սադախլոյի հատվածից դեպի արևմուտք՝ մինչև Կուլուրթաշ սարը ընկած սահմանը: Քանի որ գոյություն ունեցող վիճակով հարակից գյուղերի հողահանդակները կտրատվում էին մասերի, առաջարկվում էր սահմանագծի փոփոխություն: Սահմանագծի նման տարբերակով Վրաստանը ձեռք էր բերում շուրջ 350 քառ. վերստ տարածք³, որը չափազանց հարուստ էր վառելիքային և գլխավորապես շինարարական անտառանյութերով: 1) Նման զիջման պարագայում վրացիներին է անցնում Փամբակի ամբողջ հովիտը՝ ներառյալ Ալեքսանդրապոլ քաղաքը, Ջալալօղլին, Պրիվոլնոյեն, Վորոնցովկան: Բացի այդ, Լոռու նշանակալից մասը բացարձակապես զրկվում էր նաև Մդարթ գյուղի շրջանում գտնվող Էջմիածնի նախկին եկեղեցապատկան անտառային հանդակները օգտագործելու հնարավորությունից՝ ճանապարհների բացակայության հետևանքով: Ըստ հայկական կողմի՝ եթե վրացիներին հաջողվեր իր տարածքում ընդգրկել նաև Շամբլուղ բնակատեղը, ապա դա փաստացիորեն հավասարագոր էր Ալավերդու պղնձաձուլական գործարանի փակմանը, քանզի գլխավոր հանքահորերը գտնվում էին հենց այդ շրջանում⁴: 2) Ջիջման պարագայում Հայաստանը կորցնում էր շուրջ 350 քառ. վերստ տարածք: Ըստ առաջարկվող սահմանագատման մեկ այլ տարբերակի՝ Սադախլոյի հատվածը վրացիներին զիջել և հյուսիսային մասում՝ Կուլուրթաշ սարից մինչև Սադախլո ընկած մի շարք գյուղերի Հայաստանին անցնելու պարագայում սահմանագիծը պետք է անցներ Կուլուրթաշ սարով⁵: Ընդ որում, ըստ այդ տարբերակի, Զինգին սարը, Դամիա գյուղը՝ մինչև Շումալ սարը, անցնում էին Հայաստանին, իսկ երկաթգծի երկայնքով Կոթիղ Դաղ սարից մինչև Սադախլո գյուղը՝ Վրաստանի տիրապետության տակ⁶: Ուստի ըստ նախգծվող

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 1, 69:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 1 հակ.:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 2:

սահմանագծի՝ Վրաստանին զիջվող Սադախլոյի հատվածի փոխարեն Հայաստանին էր անցնում հարուստ անտառահանդակ, որը ներառում էր երկու գյուղական համայնքներ՝ Օփրեթի մի մասը՝ առանց Ներքին և Վերին Ցերանվի գյուղերի, և Չեչկանի մի մասը, որի մեկ այլ կտորն արդեն գտնվում էր Հայաստանի կազմում¹: Հատկանշական է, որ վերը նշված համայնքների բնակչության գերակշռող մեծամասնությունը ըստ 1915 և 1917 թթ. «Կովկասյան օրացույցի» տվյալների հայեր էին, այդ թվում Աղքյորփին (606), Դարբազը (205), Բրդաձորը (104), Դամիան (547), Լիչքաձորը (533), Խոժոռնին (884) և այլն, ընդհանուր առմամբ՝ 3165 հայ²: Ամեն դեպքում, քննարկելով վրացական կողմի ներկայացրած նախագիծը, ՀԽՍՀ իշխանությունները ելնում էին այն իրողությունից, որ այդ համայնքները ժողովրդագրական տեսանկյունից շաղկապված էին Հայաստանին: Հայկական կողմը գտնում էր, որ վրացական հայեցակարգի ընդունման պարագայում Հայաստանը կորցնում էր զգալի կենսատարածք: Ըստ այդմ ենթադրվում էր, որ Լամբալոյի շրջանը հնարավոր էր զիջել միայն այն պայմանով, եթե ՀԽՍՀ տարածքում ընդգրկվեր հացառատ Դամիա գյուղի շրջանը³: Բերվող փաստաթղթում արված են ամփոփիչ եզրահանգումներ, ըստ որի ստացվում էր հետևյալ պատկերը. Սադախլոյի շրջանի փոխարեն Հայաստանին տրվեր Սադախլո-Կուլուբաշ սարից հյուսիս ընկած շրջանը: Սահմանագատման խնդրի նման լուծումը, հիմք ունենալով պահպանելու բնակչության էթնիկական միասնությունը, ներքին տնտեսական կապերը և երկու շրջանների աշխարհագրական ամբողջականությունը, համարվում էր դիտարկվող տեղանքի օբյեկտիվ պայմաններին առավել համապատասխանող: Ինչ վերաբերում էր Սադախլոյից-Կուլուբաշ սարը ընկած տարածքամասին, ապա ըստ հայկական կողմի այստեղ սահմանագիծը չպետք է փոխվեր, ինչպես ենթադրվում էր վրացիների կողմից ներկայացվող ջրաբաժանքի վերաբերյալ նախագծում, քանզի նման լուծումը Հայաստանին զրկում էր միակ շինարարական անտառանյութից: Բացի այդ, ՀԽՍՀ իշխանությունների դիրքորոշմամբ, եթե այդուհանդերձ Վրաստանը համաձայնվեր ճոճկանի գյուղական համայնքի մնացած մասի և Օփրեթի մի մասի Հայաստանի կազմում ընդգրկելուն, փոխարենը Վրաստանին կզիջվեր Սադախլոյի սեկտորը (1-ին տարբերակ), և այս դեպքում գործող սահմանագիծը պետք է մնար անձեռնմխելի⁴:

Այս ամենը ակնհայտորեն վկայում էր շարունակական քաղաքական մանևրումների միջոցով հայ-վրացական տարածքավեճում շահումներ ունենալու վրացական իշխանությունների ձգտման մասին, ինչն անփոփոխ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

մնաց թե՛ մենշևիկյան հանրապետության և թե՛ Խորհրդային Վրաստանի ժամանակ:

Այս առումով վրաց պատմակեղծարար Գ. Մարխուլիան պնդում է, որ դեռևս 1922 թ. հայկական քաղաքական-կուսակցական շրջանները նոր նախագիծ են առաջարկել, ըստ որի՝ Ջավախեթիայի (Ջավախք) մեծ մասը և կամ Ախալքալաքի շրջանը պետք է միանար Բորչալուի գավառին՝ մեկ միասնական հայկական վարչական միավոր ստեղծելու նպատակով¹: Իսկ Ի. Ջավախիշվիլին եզրահանգում էր. «Պարզ է՝ այդ ծրագիրն էլ հիշյալ այդ երկու գավառների Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմաններից անջատելու և Հայաստանին միացնելու վարպետորեն մտածված առաջին քայլի նախագիծն էր, որին անպայմանորեն պետք է հետևեր նաև երկրորդը: Բավական է աչքի անցկացնել դաշնակցականների կողմից կազմած քարտեզները, և պարզ կդառնա, որ այստեղ էլ, թեև ուրիշ ճանապարհով, պայքարն ընթանում է նրանց առաջվա նպատակներն իրականացնելու համար»²: Հենց այս նկատառումները հաշվառելով՝ Գ. Մարխուլիան եզրակացնում է, որ 1923 թ. հայկական այդ փորձը ձախողվեց³: Նա պնդում է, որ դրանից հետո հայկական կողմը նորացված տարբերակներ առաջադրեց, և այդ կապակցությամբ կրկին վկայակոչում է Ի. Ջավախիշվիլուն, որը գտնում էր, որ «հայերի այս նախագիծն իրականացնելու կատարյալ անհնարինության հաստատումը ոչ մի դժվարություն չէր ներկայացնում Վրաստանի հողագործության կոմիսարիատի համար և, այսպիսով, այս նախագիծն էլ մերժվեց:

Այստեղ մենք գործ ունենք Հայաստանի համար արհեստականորեն քաղաքական տարածք ստեղծելու դաշնակցականների՝ հին քարտեզներում պատկերված պլանը իրականացնելու փորձի հետ»⁴: Ի. Ջավախիշվիլին լիովին մերժելի էր համարում հայկական կողմի ցանկացած, այդ թվում որևիցե ձևով ինքնավարության շնորհման նախագիծ. «Մի քանի խոսք Ջավախեթիային (Ջավախք – Վ. Վ.) ինքնավարություն շնորհելու և բաժանելու անհրաժեշտության իբրև թե նոր նախագծի մասին: Ամբողջ վերոշարադրյալից հետո պարզ է, թե ինչ նպատակով և որտեղից է բխում նաև այս նախագիծը: Ո՛չ աշխարհագրական, ո՛չ էլ տնտեսական պայմանները չեն փոխվել: Հապա ինչո՞վ է պայմանավորված այս իբրև թե նոր պլանը, եթե ոչ

¹ Տե՛ս **Мархулия Г. Р.**, Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах: Տե՛ս Доклад И. Джавахишвили правительству Грузии, 1926, <http://iberiana.wordpress.com/armeniageorgia/1918-1920/>:

² Իվանե Ջավախիշվիլու արխիվից // Հայ-վրացական պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1918-1920): Նյութերի ժողովածու: Պրակ առաջին: Կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հր. Բայրամյանը, Երևան 2001, էջ 60:

³ Տե՛ս Доклад И. Джавахишвили правительству Грузии:

⁴ Նույն տեղում: Տե՛ս նաև Իվանե Ջավախիշվիլու արխիվից // Հայ-վրացական պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1918-1920), էջ 61:

այն նույն քաղաքական-տարածքային նպատակին հասնելու գործոնով: Եթե նախկին Ռուսիայի տիրապետության ժամանակ վրաց ժողովրդի շահերը Վրաստանում ոտնատակ էր արվում, և Վրաստանում եղած ազատ հողը ռուս և հայ չինովնիկների քաղաքականության օգնությամբ միայն հայերն ու ռուսները ձեռք գցեցին, մի թե հիմա էլ պետք է վրաց ժողովրդի կենսական շահերը զոհաբերվեն հայ դաշնակցականների ազգային քաղաքական նախագծերի իրականացմանը: Մա այնքան անհավատալի է, որ համոզված եմ՝ ԽՍՀՄ կառավարությունն այս նախագիծն էլ կմերժի ճիշտ այնպես, ինչպես մերժվել են այդ նույն շրջաններից բխող վերոհիշյալ նմանատիպ նախագծերը»¹:

1921 թ. նոյեմբերի 6-ին Խորհրդային Վրաստանի և Խորհրդային Հայաստանի միջև կնքվեց պայմանագիր, որը պարզորոշեց երկու հանրապետությունների միջև սահմանաբաժան գիծը, որն ըստ էության ճշգրտորեն համապատասխանում է ներկայիս սահմանագծին: Ըստ այդ պայմանագրի՝ Խորհրդային Հայաստանի կազմում կրկին ընդգրկվեց ամբողջ Հայկական Լոռու տարածքը, ներառյալ նախկին Չեզոք գոտին՝ համատիրությունը, ինչպես նաև դրանից դեպի հարավ գտնվող Լոռու տեղամասի տարածքը: Իրականում եղավ այնպես, ինչպես նկատել է Հովհ. Քաջազունին 1923 թ. հունիսի 17-ին Ս. Վրացյանին ուղղված նամակում: Ըստ նրա՝ ռազմաքաղաքական լարվածությունը հայ-վրացական հարաբերություններում 1921 թ. սկզբին այլ բովանդակություն ձեռք բերեց, իսկ սահմանագատումը այդ պահին խորհրդային իշխանությունների պարտադրմամբ որոշակի լուծում ստացավ, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը հարկադրված էր «հրաժարվել» Ախալքալաքից հոգուտ Վրաստանի, իսկ Լոռին պահել իրեն. «Ցավալի ու ամոթալի էր խոստովանել, բայց փաստն այն էր, որ մենք դեռ եւս չենք յասունացած մեր վեճերը հարթելու համար, դեռ եւս հարկավոր է մի արտաքին ոյժ, արտաքին հեղինակություն՝ Անդրկովկասում միջազգային խաղաղութիւն ապահովելու համար: Այսօր այդ արտաքին ոյժը, այդ հեղինակութիւնը՝ Խորհրդային Մոսկուան է»²:

1921 թ. նոյեմբերյան համաձայնությունից հետո վրաց-հայկական սահմանագծի ուրվագծերը գործնականում անփոփոխ մնացին 90 տարուց ավելի:

¹ Իվանե Ջավախիշվիլու արխիվից //Հայ-վրացական պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1918-1920), էջ 61-62: Տե՛ս նաև Доклад И. Джавахишвили правительству Грузии: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 6, թ. 82-111:

² Քաջազունի Յովհ., Յետ մահու: Պատմուածքներ, յուշեր, յօդուածներ, Պէյրուք, 1965, էջ 225, 227-228:

Ваник Вирабян – *Вокруг некоторых вопросов армяно-грузинского территориального спора и пограничного разграничения (февраль 1921 г. – начало 1922 г.)*

В 1921-1922 гг. в армяно-грузинском бескомпромиссном споре создалась новая ситуация. 6 ноября 1921 г. подписанным в Тифлисе и считавшимся окончательным соглашением об армяно-грузинской границе Нейтральная зона, исключая несколько населенных армянами приграничных сел, воссоединилась с Советской Арменией. По нажиму грузинской стороны, пограничное разграничение приобрело совершенно иное содержание. Ряд армянских сел – Джандар, Опрет, Хожорни, Брдадзор, Садахло и другие села остались в границах Грузии. Между Советской Арменией и Грузией возникли новые перегибы, связанные с вопросом воссоединения районов Воронцовка и Привольное с Советской Арменией, и вокруг уточнения деталей межгосударственной пограничной линии возникла напряженность, поскольку грузинские власти не удовлетворились установленным состоянием границ и, воспользовавшись внутренней очевидной поддержкой в верхних эшелонах РК(б)П, пошли навстречу новому столкновению в вопросе территориального разграничения. Грузинская сторона совершенно явным образом приняла все усилия для расчленения новых кусков с Лорийской территории с целью их соединения с Грузинской ССР.

Vanik Virabyan – *Over the Armenian-Georgian Territorial Debate and Some Demarcation Issues (February, 1921 – beginning of 1922)*

In 1921-1922, upon the Armeno-Georgian uncompromising border-territorial dispute, a new situation was created. On 6 November, 1921, the final agreement on the Armeno-Georgian border was signed in Tiflis, according to which the Lori Neutral Zone, with the exception of a few Armenian-populated border villages, reunited with Soviet Armenia. The Georgian side claimed that the demarcation of the border had got quite a different content and that a number of Armenian villages - Jandar, Opret, Khozhorni, Berdadzor, Sadakhlo, etc., should remain within the borders of Soviet Georgia. New difficulties arose between Soviet Armenia and Soviet Georgia, concerning the issue of the reunification of Vorontsovka and Privolnoyi regions with Soviet Armenia, and there was also a tension in the issue of interstate border demarcation details, as Georgian authorities were not satisfied with the presumptive situation. Hence, they took advantage of the obvious internal support of the upper circles or the Caucasian Bureau of the Russian Communist (Bolshevik) Party's Central Committee and confronted a new demarcation conflict. The Georgian side clearly made every possible effort to take new pieces of territories from Lori and annex them to Soviet Georgia.